ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի կարիքների համար բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «18» հուլիսի 2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Հասմիկ Ալեքսանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի ռազմարդյունաբերական համալիրի զարգացման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի անդամներ՝

Բաբկեն Ոսկանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության գլխավոր մասնագետ

հանձնաժողովի քարտուղար՝

Դիանա Գրիգորյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակա՝

Կարեն Բաթոյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահի օգնական

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 eauction.armeps.am համակարգում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել 16.07.2024թ. ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 17.07.2024թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	բենզին, ռեգուլյար	1405000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	flashltdtender@gmail.com

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2024/12» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	1077166.67	20 %	1292600	1077166.67	20 %	1292600

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 17.07.2024թ. և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.

«ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը Հավելված 1-ը, իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.3-ը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և լիազորագիր:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

«ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.3) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը ***որոշեց «ՖԼԵՇ» ՍՊԸ -ին հայտարարել ընտրված մասնակից,***

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Հանձնաժողովի՝

Անդամներ՝

Հասմիկ Ալեքսանյան

Բաբկեն Ոսկանյան

Քարտուղար՝

Դիանա Գրիգորյան